նալի կերպով աճեց և կարող եղաւ եղանակի ամեն տեսակ փոփոխութիւններին դիմանալ։

«Թէպէտ և եղինճի հայրենիքը Ասիայի արևելեան երկիրներն են, բայց և այնպէս նա ընդունակ է ընտելանալու նաև պակաս տաքութիւն ունեցող կլիմային։

«Այս բոյսը եղինճի դասակարգին է պատկանում։ Բուսաբանները դորան անուանել են hochmeria urtica.

«Ասիայում այս բոյսը chin grass է կոչւում, Ֆրանսիայում ramie (ռամի) որ ընդունուած է ամբողջ Եւրոպայում, Ալժիրիայում, Եգիպտոսում և մինչև անգամ Կովկասում։ Իսկ Չինաստանում, Ճապոնիայում, Հնդկաստանում և Նիդերլանդեան իշխանութիւններում յայտնի է զանազան անուններով։

«Անհերքելի է, որ եղինճի նրբաթելերը գերազանց են թէ վուշի, թէ կանեփի և թէ բամբակի նրբաթելերից. այնպէս որ աւելորդ խառնուրդները ջոկելուց յետոյ, հիանալի մանած է ստացւում, և բացի այդ եղինճի թելերն աւելի երակայաւուն, մետաքսանման, փայլուն և՝ առաձգական են, և բոլոր մանելիներից՝ կարելի է ասել, եղինճն աւելի մօտ է մետաքսին։

«Օզուրգէթի նահանգի մէջ իշխան Գրիգոր Գուրիէլու կալուածներում եղինճի մշակութեան համար արած փորձերը, որոնք առաջին և լուրջ կերպով մշակւածը կարելի է համարել, եթէ չը յաջողւեցան, դորա միակ պատճառը պէտք է համարել պ. Մարկի վաղահաս մահը, որ չը թողեց նրան իւր աշխատանքի պտուղը վայելել։ Իսկ պ. Մարկից յետոյ չը գտնուեց մէկը, որ յանձն առնէր այդ՝ հարստութեան մի նոր աղբիւր խոստացող ժառանգութիւնը»։

Համառօտակի ապացուցանելով, թէ եղինճի արդիւնաբերութիւնը կարելի է նաև Կովկասում, հեղինակը կարճառօտ կերպով բացատրում է նորա մշակման միջոցները, նորանից նրբաթելեր ստանալը. նորա արդիւնաբերութիւնը և այն առաւելութիւնները, որոնցով նա գերազանցում է միւս բոլոր մանելիներին։

Ն.—

ՄԻԷՅԼՍ, դօքտոր.—«Զինուորների ամենասովորական աչքացաւն ու նրանից հեռու մնալու միջոցները. կազմեց դ.-ր Միէյլս, ահնաբոյժ Կովկասեան զինուորական շրջանի։ Իշխանութեան թոյլտուութիւնով հրատարակութիւն գնդապետ Մելիք-Հայկազեանի։ Թիֆլիս, տպարան Մ. Վարդանեանի 1888 թ., ութածալ, 34 երես, սառ № 12. գինը ձրի։

«Զօրքերի մէջ երևացող աչքացաւի դէմ չատ միջոցներից մինն էլ, անկասկած, նրանցում օգտակար մաքեր տարածելն է, թէ ինչ են այդ հիւանդութեան պատճառները և թէ որոնք այն միջոցները, որոնցով կա-

րելի է դրանց առաջն առնել։ Այդպիսի մտքեր տարածելուն կարող է օգնել՝ բժշկի, սպայի (օֆիցերի) կենդանի խօսքը, նոյնպէս և տպագրական խօսքը, որպիսին առա այս գրքոյկն է. զինուորները այս կերպով ձեռք բերած օգտակար մտքերը՝ հայրենիք վերադարձած ժամանակ հետները կը տանեն և կը տարածեն նաև ազգաբնակութեան մէջ, ուտեղ սաստիկ տարածուած է աչքացաւը։

«Այս գրքոյկը իւր տեսակի մէջ լինելով առաջին փորձերից մինը, գրուած է զինուորների մէջ օգտակար մտքեր տարածելու համար, որպէս զի նրանք ևս իրանց կողմից նոյն մտքերը տարածեն ազգաբնակութեան մէջ։

«Գրագէտ զինուորներից շատերը սիրում են կարդալ. համարձակ կարելի է ենթադրել թէ նրանք, որոնք կը կարդան այս գրքոյկը, իրանց կարդացածից գոնէ մի քանի հարկաւոր խրատներ կ'ըմբռնեն»։

Գրքոյկում ասուած այս տողերը գաղափար են տալիս նորա բնաւորութեան մասին։ Հեղինակը քննում է երկու տեսակ աչքացաւեր. ա) տրախոմա ասուածը, որ աչքի կոպերն է բռնում և որ վարակիչ բնաւորութիւն ունի և բ) այն սաստիկ վտանգաւոր աչքացաւը, որ գոյանում է սուսունակի ժահրից, եթէ նա դիպչում է աչքին։ Այդ հիւանդութիւններից ազատ մնալու համար գրքոյկը առաջարկում է զգուշութեան խորհուրդներ, այն է, գործ չ'ածել հիւանդ մարդու երեսսրբիչ, թաշկինակ, բարձ, աղտոտ ձեռքով չը տրորել աչքերը և ամեն կերպ աշխատել մաքրութեան մէջ լինել [1]։

Ն.—

---

[1] Ռուսաց զօրքի մէջ ոչ մահաւէթ հիւանդութիւններից աչքացաւը կարեւոր տեղ է բռնում։ Մեզ հասած են ամենավերջին տեղեկութիւնները ռուսաց զօրքի հիւանդութիւնների մասին, որոնք վերաբերում են ներկայ Թուականի փետրուար ամսին։ Այդ պաշտօնական տեղեկութիւններից երեւում է, որ սոյն փետրուար ամսին ռուսաց զօրքը ունէր 44.207 հոգի աչքացաւով հիւանդներ։ Հասկանալու համար Թէ այդ ինչ ահագին տոկոս է կազմում, աւելցնենք, որ պատերազմական մինիստրի զեկուցումից երեւում է, որ ռուսաց զօրքը առ 1-ն յունուարի 1889 Թ. բաղկացած էր 620.484 ստորին զինուորներից և 32.644 գեներալներից, շտաբի և աւագ սպաներից։

Խմբ.